

ՍՏԵՓԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆՑ

Պատմական գիտությունների թեկնածու

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՆԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ

Փետրվարյան հեղափոխությունից հետո Արևելյան Հայաստանում իշխանությունն իրենց ձեռքը վերցրին Երևանի մահաճգային և Կարսի մարզային գործադիր կոմիտեները: Երևանի մահաճգային գործադիր կոմիտեն կազմված էր քաղաքային դումայի անդամներից: Գործադիր կոմիտեն իր կողմից առանձնացրել էր մահաճգային կոմիտարիատ, որն անմիջապես կառավարում էր մահաճգը:

Կոմիտարիատի գլուխ էր կանգնած Երևանի քաղաքագլուխ, Դաշնակցություն կուսակցության անդամ Ս. Խաչատրյանը, որը փետրվարի 28-ին քաղաքացիներին ուղղված իր անդրանիկ ուղերձում մասնավորապես նշեց. «Երևան քաղաքում ժամանակավորապես կազմակերպվեց իմ միապետության ներքո ժամանակավոր գործադիր կոմիտե: Քաղաքացիք հրավիրվում են աջակցելու կոմիտեին իր առաջիկա պատասխանատու գործում: Կոմիտեն լիազորված է, որ իր բոլոր կարգադրությունները՝ ուղղված մեր սիրելի հայրենիքի բարօրությանը, ճշտությանը կկատարվեն ազգաբնակչության բոլոր խավերի կողմից: Կոմիտեն կոչ է անում բոլոր գիտակից հասարակական ուժերին, քաղաքիս համայն ազգաբնակչությանը՝ ի մի խմբվելու, կարգ ու կանոն պահպանելու: Քաղաքացիներ, կարգապահ լինե՛ք և իսկույն դիմե՛ք խաղաղ շինարարության աշխատանքի»¹:

Մարտի 17-ին Վեհափառ Հայրապետը ողջույնի հետագիր ուղղեց ժամանակավոր կառավարության ղեկավարներ Մ. Ռոճյանկոյին և իշխան Գ. Լվովին²:

Մի՛նչ այդ, մարտի 11-ին, Նախիջևանի փոխանորդ Սիոն վարդապետը հաղորդում էր Երևանի փոխբեմակալ Խորեն եպիսկոպոսին. «Ամսիս 7-ին լսվում է կայսերական հրաժարականը քաղաքային դումայի դահլիճում: 8-ին քաղաքային ակումբում որոշվում է վարչական կոմիտե: Հայությունը միաձայն որոշում է յուր մերկայացուցիչներն ընտրելու յուր հոգևոր պետի ձեռններեցությամբ:

Ժողովն սկսում է ժամը 10-ին, վերջանում երեքին՝ ընտրությամբ վստահելի անձանց՝ հինգ անդամների, երկու օգնականների:

Երեկոյան դեմ, ժամը 4-ին, ամբողջ բանակը՝ հեծելազոր և հետիոտն, ազատության կարմիր դրոշակներով իջնում է քաղաք՝ փոխադարձ ողջույնի և շնորհավորության:

Բոցավառ ողջույնով և օրհնությամբ շնորհավորում են Մեծին Ռուսիո աստվածային հրաշագործությամբ պարգևված կենսաբեր վերածնությունը: Զինվորականությունը ամ-

¹ ՀՀՊԿԱ, ֆ. 48, ց. 1, գ. 942, թ. 1:² ՀՀՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 151, թ. 4:

բողջ խոսակցությունն ունկնդրում է զինվորական պատվով և ակնածելի ուշադրությամբ: Զգացված ամբոխը խնդրում է երկրորդել, երկրորդում եմ...

Ամենայն ինչ խաղաղության և բարեկեցության վիճակում է: Պարսիկ խան-քաղաքագլխի հրաժարման պատճառով քաղաքագլխությունը հանձնված է օգնական Պապին Բուլունկյանին, որը բարի և ազնիվ երիտասարդ է³:

Փետրվարյան հեղափոխությունը աքսորավայրից ազատեց մի շարք քաղաքամտարկյալների, որոնց թվում նաև Աշահապետ հայրենասեր, Գանձակի մայրիկին փոխանորդ Կորյուն վարդապետ Սահակյանին: Նա ժամանակին Մայր Աթոռ Ս. Էջմիածին եկավ Մկրտիչ Ա. Վանեցի (Խրիմյան Հայրիկ) Կաթողիկոսի հետ, եղել էր նրա անձնական քարտուղարը և գավազանակիրը: Հետագայում Աշահապետը Գանձակի փոխանորդ: 1905-1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ նա ցուցաբերեց կազմակերպչական ընդունակություններ և կարողացավ կազմակերպել քաղաքի և շրջակայքի հայերի ինքնապաշտպանության գործը: Հենց այդ բանի համար էլ ձերբակալվեց և զինվորական դատարանի կողմից դատապարտվեց տառը տարվա աքսորի և ուղարկվեց Իրկուտսկ:

1917 թ. մայիսի 9-ին Կորյուն վարդապետը Սիբիրից վերադարձավ Ս. Էջմիածին: Մայիսի 10-ին Վեհափառը Կորյուն վարդապետի հետ առանձին հանդիպում ունեցավ: Հայր Սուրբը խնդրեց Վեհափառին վերընդունել իրեն «միաբանության շարքը, որին ուխտել է և որին գալիս է կրկին և կրկին նվիրվելու և ծառայելու բոլոր ուժերով, հոգու, մտքի ամբողջ կարողությամբ»⁴: Մայիսի 27-ին Կորյուն վարդապետը Աշահապետին Մայր Աթոռի Տպարանական վարչության մայրապետ⁵, ճյուղ թվականի սեպտեմբերին՝ վանական կառավարչության անդամ, իսկ 1918 թ. հուլիսի 10-ին՝ Սյունյաց փոխանորդ և Տաթևի մեծատանի վանահայր⁶:

Միապետության տապալումից հետո հասկանալի է, որ պետք է վերացվեր 1836 թ. միապետության կողմից պարտադրված Հայ Եկեղեցու օրենսդրությունը (Պրոլեմիան), նաև պետք է վերացվեին Հայ Եկեղեցուն օտարոտի հիմնարկները՝ Սինոդը, Կոնսիստորիաներն ու հոգևոր կառավարչությունները և դրանց փոխարեն հիմնվեին նորերը: Հենց այդ պատճառով էլ 1917 թ. մարտի 19-ին Մայր Աթոռի միաբանությունը դիմեց Գևորգ Ե-ին, որ մախաձեռնություն ցուցաբերի բարեփոխումներ կատարելու ուղղությամբ: Դիմումում, որն ստորագրել էին Ամանիա արքեպիսկոպոս Համազասպյանը, Սահակ արքեպիսկոպոս Այվազյանը և Հովհաննես արքեպիսկոպոս Ծիրակունին, գրված էր հետևյալը. «Ռուսիայի միապետական կազմի փոփոխության հետ հետզհետե փոխվում են ժամանակի պահանջներին անհամապատասխան օրենքներն ևս: Ներկա պետական վարչության գլուխ կանգնած մախարարների հայտարարած ծրագրի ուր հողվածների՝ երկրորդ հողվածով վերացվում է հպատակ բոլոր ազգերի իրավանց սահմանափակումը, ևս առավել մեր հայ ազգի, որի Եկեղեցվո և ազգային շահերն սահմանափակված էին 1836 թվի օրենսդրությամբ և տարեցտարի հավելված օրենքներով ավելի խիստ էին սահմանափակվում:

³ ՀՀՊՊԿԱ ֆ. 48, ց. 1, գ. 942, թ. 1:

⁴ «Արարատ», 1917, հունիս-հուլիս, էջ 450:

⁵ ՀՀՊՊԿԱ ֆ. 56, ց. 16, գ. 43843, թ. 1:

⁶ ՀՀՊՊԿԱ ֆ. 56, ց. 16, գ. 866, թ. 1:

Հարկ չկա թվել սահմանափակված կետերն ի վնաս Հայ Եկեղեցվո և ազգային շահերի, քանի որ հայտնի են ամենիս, և մեր աչքը շատ բան ենք տեսել⁷:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Գևորգ Ե Կաթողիկոսի հրամանով տեղի ունեցավ դիվանական ժողով՝ մասնակցությամբ Հուսիկ և Մատթեոս Սրբազանների և Տիրայր ու Գևորգ վարդապետների, որոնք քննության առան Հայ Եկեղեցու ներկա խնդիրները: Ժողովը գործադրության համար հետևյալ ժամանակավոր որոշումներն ընդունեց.

«1. Հայ Առաքելական Եկեղեցին, որպես ինքնուրույն և ինքնագլուխ, անկախ Եկեղեցի, պետք է ամբողջության նկատմամբ, թե՛ կազմության և թե՛ ներքին վարչական կառավարության մեջ, ըստ ամենայնի ազատ լինի այն բոլոր սահմանափակումներից, որոնք առաջ են եկել 1836 թվին պետության կողմից հաստատված «Պոլոժենիա»-ով, ինչպես և այնուհետև, մինչև ներկա շրջանը, զանազան ժամանակ տրված կառավարական հրահանգներով, շրջաբերականներով, ժամանակավոր կանոններով և ցուցումներով, որոնք օրենքի ուժ են ստացել և գործադրության անցել:

2. Մինչև Եկեղեցու ոգում և ներկայիս պահանջներին համապատասխան ներքին կառուցողության խմբագրվելն ու օրինական կարգով գործադրության մեջ մտնելը, ընթացիկ գործերը վարել Հայ Եկեղեցու սովորական կարգով, միայն հոգևոր իշխանության կողմից մոր պաշտոններ մշանակելու ժամանակ՝ հայտնել կառավարության ոչ հավանության և կամ հաստատության, այլ՝ ի գիտություն միայն»⁸:

Մարտի 9-ին կազմավորված Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (Օզակոմը) Պետերբուրգից հասավ Բաքու և ճանապարհվեց դեպի Թիֆլիս: Ինչպես Գևորգ Ե-ին գրում էր Մ. Պապաջանյանը, «կոմիտեն ուղարկված է Անդրկովկաս՝ նպատակ ունենալով մոր կարգերը ամրապնդելու և կարգ ու կանոնը հաստատելու»: Պապաջանյանը անհրաժեշտ էր համարում, որ Վեհափառը Հայ Եկեղեցու իրավունքների սահմանափակումների հարցի քննարկման համար Թիֆլիս ուղարկի իր ներկայացուցիչներին⁹:

Վեհափառ Հայրապետը 1917 թ. մարտի 22-ի թ. 462 կոնդակով Օզակոմի հետ բանակցելու համար, որպես իր ներկայացուցիչներ մշանակեց վիրահայության առաջնորդ Մխիթար եպիսկոպոսին, Ծամախու առաջնորդ Բագրատ եպիսկոպոսին և Սինոդի անդամ Գևորգ վարդապետին: Կաթողիկոսը գրում էր, որ նրանք լինեն. «արտայայտիչ լուսյո և իղձերի մերոց...»: Այս պատգամավորները պետք է Օզակոմին ներկայացնեին մի ծրագիր Հայ Եկեղեցու ներքին վարչական վերակազմության¹⁰:

Մինչև բանակցությունների սկսվելը՝ 1917 թ. մարտի 27-ը, Վեհափառ Հայրապետը դիմեց Ռուսաց պետության ժամանակավոր կառավարությանը թ. 464 կոնդակով, ուր պահանջում էր լուծարել Հայ Եկեղեցու իրավունքները սահմանափակող միապետական «Պոլոժենիան»¹¹:

⁷ ՀՀՊՊԿԱ ֆ. 57, ց. 2, գ. 457, թ. 19-20:

⁸ ՀՀՊՊԿԱ ֆ. 57, ց. 5, գ. 151, թ. 21:

⁹ Նույն տեղում, թ. 5:

¹⁰ Նույն տեղում, թ. 13:

¹¹ ՀՀՊՊԿԱ ֆ. 57, ց. 5, գ. 43151, թ. 15:

Մարտի 30-ին, ժամը 4-ին, Նորին Սրբության Արքեպիսկոպոսական թիֆլիսի Ամսիկին փոխարքայական պալատում Անդրկովկասի կոմիսարներին և Վեհափառ Հայրապետի անուցից ողջունեցին Անդրկովկասի մոր իշխանությանը՝ ճշելով, որ Հայաստանայց Եկեղեցին միշտ եղել է «ազգային-դեմոկրատական»:

ՕԶԱԿՈՒՄ-ի Ամսիկին Ա. Խաղամովը կաթողիկոսական ողջունում ունկնդրելուց հետո ճշեց, որ «Ամսիկին ռեժիմը հայ ազգին և Եկեղեցուն շատ է մեղել ու հալածել, սակայն մոր իրավակարգի ժամանակ մա կազատվի և իրավունք կստանա ինքնուրույն տնօրինելու յուր ինքնորոշման վերաբերյալ բոլոր խնդիրները»: Հանդիպման վերջում Խաղամովը հույս հայտնեց, որ հայ հոգևորականությունը «չի զլանա յուր հորդորներով մպաստել մոր իրավակարգի ընդմիջող հաստատությանն ու հարատևությանը»¹²:

1917 թ. ապրիլի 5-ի թ. 550 կոնդակով Վեհափառ Հայրապետը ստեղծեց մի հանձնաժողով՝ Սինդի Ամսանդամ Հուսիկ արքեպիսկոպոս Մովսիսյանի Ամսագահությանը և Ամսանակցությանը Երևանի փոխթեմակալ Խորեն Եպիսկոպոս Մուրադբեկյանի, Սինդի Ամսան Մատթեոս Եպիսկոպոս Մատթեոսյանի, դիվանապետ Տիրայր ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանի, Սինդի Ամսան Գևորգ վարդապետ Չորեքչյանի և «Արարատ» ամսագրի խմբագիր Գյուտ արեղա Ղազարյանի, որը պետք է մշակեր Հայ Եկեղեցու բարեկարգության ընդարձակ ծրագիր:

1917 թ. ապրիլի 7-ին Գևորգ Ե Կաթողիկոսն իր թ. 678 կոնդակով ժամանակի մոր ոգու և կյանքի պայմանների թելադրանքով ընդլայնում է կանանց իրավունքները հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, այդ թվում մահ Եկեղեցու թեմական ժողովների և թեմական խորհուրդների ընտրության հարցում. «Մեր հասարակական համայնական կյանքը մոր ձևով կերտվեցավ, և այդ կերտվածքը շատ երկար ժամանակ մորա իսկական տիպարը համարվեցավ, որի հետևանքն եղավ այն, որ մեր հասարակական կյանքի շրջանից բոլորովին վանվեցավ ազգային և հանրական գործերին որոշ տարրերի մասնակցությունը, որոնցից մեկն էր և կանացի սեռի զրկվիլն այդպիսի մասնակցությունից:

Այժմ թող բավական համարվի, որչափ մեր Եկեղեցու այս ոգին զրկանի տակ է պահված եղել, մի ոգի, որով մեր Եկեղեցին փայլել է թե՛ յուր Ամսանական շրջանի ժամանակ, թե՛ հետագա դարերում:

Հայոց ժողովուրդ,

Այս օրվանից սկսած արտոնում ենք կանացի սեռի իրավունքների վերականգնումը¹³:

1917 թ. մայիսի 15-ին թ. 843 կոնդակով Գևորգ Ե-ն, մի հաստատում կանոնադրություն ունենալու մատակարար, Մայր Աթոռի միաբանությանը պատվիրում է միավորել և կարող ուժերի օժանդակությամբ ստեղծել հանձնաժողովներ, մշակել մոր կանոնադրություն և վերջնական Ամսագիծը Արքեպիսկոպոսական հաստատման:

Ինչպես վերը ճշվեց, 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունը, տապալելով միապետական կարգերը, ազատություն և ինքնուրույն զարգացման հնարավորություն խոստացավ բոլոր ազգերին: Հեղափոխությունից անմիջապես հետո Հայ Եկեղեցու բարեկարգության հարցի լուծման Ամսաձեռնությունն իր ձեռքը վերցրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝

¹² Նույն տեղում, 26-27:

¹³ ՀՀԳԳԿԿ, ֆ. 48, ց. 1, գ. 942, թ. 12 և «Արարատ», 1917, ապրիլ-մայիս, էջ 335:

փորձելով Հայ Եկեղեցու բարեմորոգության խնդիրն ինքը օրակարգի հարց դարձնել և համաժողովրդական քննարկումներ կատարել: Այդ նպատակով Գևորգ Ե-ն Ս. Էջմիածնում հրավիրեց ուսանահայ հոգևորականության համագումար, որպեսզի օրակարգի բոլոր հարցերի շուրջ ընդարձակ քննարկումներ կատարվեն, և մի ծրագիր մերկայացվի գումարվելիք Ազգային-եկեղեցական ժողովին:

Մինչև ուսանահայ հոգևորականության համագումար հրավիրելը ուսանահայոց թեմերում անցկացվեցին թեմական համագումար-ժողովներ: Այսպես, մայիսի 25-ին Թիֆլիսում, առաջնորդարանի դահլիճում, երեկոյան ժամը 7-ին, բացվեց Վրաստանի և Խմբերթիայի հայ հոգևորականության թեմական համագումարը: Համագումարի նախաձեռնողներն էին թեմի հայ քահանաները, երեցփոխները, հոգաբարձուները: Համագումարում ստեղծվեց հոգաբարձուների հանձնաժողով, որի նախագահ ընտրվեց Հովսեփ քահանա Տեր-Պետրոսյանը, իսկ անդամներ՝ Գյուտ ավագ քահանա Աղանյանը, Սարգիս ավագ քահանա Օիրոյանը, Սահակ ավագ քահանա Սահակյանը, Խորեն ավագ քահանա Խոջյանը, Հարություն քահանա Շուշուրյանը, Սարգիս քահանա Երզնկյանը և ուրիշներ:

Հիմնական խնդիրները, որոնք դրվեցին Թիֆլիսի համագումարի օրակարգում, հետևյալներն էին՝ «Գրիգորյան եկեղեցի» անվանումը փոխարինել «Հայ Առաքելական եկեղեցի»-ով: Սինոդը և կոնսիստորիաները վերացնել և մի շարք այլ հարցեր՝ մվիրված եկեղեցու ներքին և արտաքին բարեփոխումներին¹⁴:

1917 թ. ապրիլի 11-ին Գևորգ Ե Կաթողիկոսի թ. 590 հայրապետական կոնդակի համաձայն, եպիսկոպոսներ ձեռնադրվեցին և հաստատվեցին Մայր Աթոռի դիվանապետ՝ Տիրայր ծայրագույն վարդապետ Հովհաննիսյանը, Սինոդի անդամ՝ Գևորգ վարդապետ Չորեքչյանը, հոգևոր ճեմարանի տեսուչ՝ Գարեգին ծայրագույն վարդապետ Հովսեփյանը, Դռան եպիսկոպոս՝ Զավեն վարդապետ Մահտեսի-Բաբայանը, և Ղարաբաղի թեմի կառավարիչ՝ Վահան ծայրագույն վարդապետ Մեղրեցին¹⁵:

Դա եղավ ի լրումն Մայր Աթոռի միաբանության շարքերի, որոնք մոտացել էին, որովհետև դրանից առաջ մահացել էին Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Խոտաթերդյանը, ինչպես նաև Մայր Աթոռի միաբաններ Ամսոն և Եսայի վարդապետները:

1917 թ. մայիսի 28-ի դրությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության անդամներն էին.

1. Ամանիա արքեպիսկոպոս Համազասպյան
2. Սահակ արքեպիսկոպոս Ալվազյան
3. Հովհաննես արքեպիսկոպոս Օիրակունի
4. Բարդուղիմեոս արքեպիսկոպոս Շուշուրյան
5. Հուսիկ արքեպիսկոպոս Մովսիսյան
6. Աշոտ եպիսկոպոս Օխեզյան

¹⁴ Նույն տեղում, թ. 52:

¹⁵ ՀՀ ՊԿԿԱ ֆ. 57, ց. 2, գ. 454, թ. 2:

7. Մխիթար եպիսկոպոս Տեր-Մկրտչյան
8. Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյան
9. Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյան
10. Բագրատ եպիսկոպոս Վարդազարյան
11. Մատթեոս եպիսկոպոս Մատթեոսյան
12. Տիրայր եպիսկոպոս Հովհաննիսյան
13. Զավեն եպիսկոպոս Մահոնեսի-Բաքայան
14. Գևորգ եպիսկոպոս Չորեքչյան
15. Վահան եպիսկոպոս Մեղրեցի (Տեր-Գրիգորյան)
16. Գարեգին եպիսկոպոս Հովսեփյան
17. Հմայակ վարդապետ Արշարունի
18. Սահակ վարդապետ Ամատունի
19. Արսեն վարդապետ Ղլտճյան
20. Խաչիկ ծայրագույն վարդապետ Դադյան
21. Կորյուն վարդապետ Սահակյան
22. Մուշե վարդապետ Տանակերտյան
23. Խահակ վարդապետ Տեր-Միքայելյան
24. Եղիշե վարդապետ Ահարոնյան
25. Խորեն վարդապետ Լազարյան
26. Արտակ վարդապետ Սմբատյան
27. Լևոն վարդապետ Սետյան
28. Երեմիա վարդապետ Ստեփանյան
29. Ռուբեն վարդապետ Մանասյան
30. Վրթանես ծայրագույն վարդապետ Հակոբյան
31. Թադեոս վարդապետ Հարությունյան
32. Վարդան վարդապետ Թումանյան
33. Գյուտ վարդապետ Տեր-Ղազարյան
34. Ներսես վարդապետ Դուլաբջյան¹⁶

1917 թ. հունիսի 12-ին, առափնյայի ժամը 10-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մատենադարանի սրահում բացվեց ռուսահայոց հոգևորականության համագումարը: Համագումարին մասնակցում էին Երևանի թեմից 12 քահանա, որոնք ընտրված էին Երևան քաղաքից և շրջաններից, Հին Նախիջևանից, Ալեքսանդրապոլից, Տաթևից և Կարսից, Վրաստանի և Իմերեթիայի թեմից 6 քահանա՝ Թիֆլիսից, Ախալցխայից, Գանձակից, Տրապիզոնից, Զրաբերդից, Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմից 9 քահանա՝ Նոր Նախիջևանից, Օդեսայից, Սիմֆերոպոլից և Ղրիմի մյուս շրջաններից, Մոսկվայից, Պետրոգրադից և Կովկասյան ռազմաճակատում գտնվող հայ զինվորական քահանաներից, Աստրախանի թեմից 6 քահանա՝ Եկատերինոդարից, Վլադիկավկազից, Գրոգնից, Պետրովսկից, Օդես-

¹⁶ ՀՀՊԳԿԱ ֆ. 57, ց. 3, գ. 119, թ. 1, ֆ. 57, ց. 2, գ. 459, թ. 9:

սայից: Ծամախու թեմից 3 քահանա՝ Բաքվից և Դերբենդից: Ղարաբաղի թեմից 3 քահանա՝ Օուշիից, Հադրութից, Վարանդայից, Դիզակից, Վարարակնից, Խաչենից: Համագումարին մասնակցեցին 29 կուսակրոն հոգևորական և 38 քահանա: Ժողովի պատվավոր նախագահ ընտրվեց Հուսիկ արքեպիսկոպոս Մովսիսյանը, նախագահ՝ Գևորգ եպիսկոպոս Չորեքչյանը, ատենապետներ՝ Ռուբեն ավագ քահանա Բեկովյանը և Մեսրոպ ավագ քահանա Մելյանը:

Համագումարը հենց առաջին օրը ողջունեց Փետրվարյան հեղափոխությունը որպես «բարեկեցության, առաջադիմության, բոլոր ազգերի ազատ զարգացման և մասնավորապես հայ ժողովրդի ազգային շահերին նպաստող քայլ»¹⁷: Դրանից հետո հրապարակվեց վեհափառ Հայրապետի՝ Համագումարին ուղղված թ. 1036 ողջույնի կոմիսիոն:

Համագումարի աշխատանքներն ընթանում էին հետևյալ բաժիններում.

1. Եկեղեցի և եկեղեցական բարեկեցություն. 2. տնտեսական. 3. դպրոցական-կալվածական. 4. վարչական. 5. ոռոսահայ եկեղեցական կյանքի այժմեական խնդիրներ:

Համագումարի հարցերն էին.

- I. Ա. Ստեղծել մի ներքին կապ կուսակրոն և ամուսնացյալ հոգևորականության միջև:
- Բ. Առավել սերտացնել կապը ժողովրդի ու հոգևորականության միջև:
- Գ. Եկեղեցին իբրև գործոն հայ ազգային եկեղեցական կյանքում:
- Դ. Հայ հոգևորականության մտավոր, բարոյական մակարդակի առավել բարձրացում:
- Ե. Եկեղեցու ներքին վարչական հարցեր:
- Զ. Քաղաքի և գյուղական քահանայությանը վերաբերող տնտեսական այլևայլ հարցեր:
- Է. Քահանայական կանոնադրություն:

II. Կուսակրոն հոգևորականության վերաբերյալ հարցեր.

- Ա. Կուսակրոն հոգևորականության վերաբերվորում:
 - Բ. Վանքերի, իբրև ազգային-կրթական-բարոյական ազդակների, վերածնության խրնդիր:
 - Գ. Վանական ներքին վարչական կազմակերպություն:
 - Դ. Վանական կանոնադրություն:
 - Ե. Կալվածական խնդիր (շահագործում, կառավարության եղանակը և այլն):
 - Զ. Միջնակարգ և տարրական դպրոցների խնդիրներ:
- Համագումարում մեկ անգամ ևս նշվեց, որ ազգային-քաղաքական գործերում ազգի ներկայացուցիչը և տեղը միշտ համարվել և համարվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Անդրկովկասյան Հատուկ կոմիտեի (ՕԶԱԿՈՄ-ի)՝ Կովկաս հասանելուց հետո տեղի ունեցավ Երկրային հողագործական կոմիտեի միատը՝ մվիրված վանքապատկան և եկեղե-

¹⁷ ՀՀՊԳԿԱ. ֆ. 57, ց. 2, գ. 482, թ. 1:

ցական հողերի առգրավմանը: Այս միստում ընդունած որոշումներն ամփիջականորեն հակակեղեցական բնույթ էին կրում և հետապնդում էին Եկեղեցին թուլացնելու և աղքատացնելու նպատակ:

Տեղեկանալով ընդունված որոշումների՝ վեհափառ Հայրապետը նոյեմբերի 27-ին ՕԶԱԿՈՒՄ-ի հասցեով հեռագիր հղեց, ուր մասնավորապես ասված էր. «Որպես ամբողջ հայ ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչը և ազգային ստացվածքի պահպանողը՝ ամբողջ ուժով բողոքում եմ Երկրային հողագործական կոմիտեի որոշման դեմ և խնդրում եմ հայ վանքերի և եկեղեցիների հողերի հարցը դուրս գցել կոմիսարիատի քննության ենթակա հարցերից: Հայ վանքերի և եկեղեցիների հողերի գրավումը բռնակալական ուժի մի ժամանակ ամբողջ ազգի վրդովմունքն առաջ բերեց, որն ամխուսափելիորեն կկրկնվի և այժմ, եթե հարցը չհետաձգվի մինչև Սահմանադիր ժողով, որին ես կներկայացնեմ իմ դիտողությունները»¹⁸:

ՕԶԱԿՈՒՄ-ի կողմից ընդունված վանքապատկան հողերի առգրավմանն ուղղված դիմադրությունն աստիճանաբար ուժ էր հավաքում: Հայ սահմանադիր Ռամկավար կուսակցության Հայաստանի խորհուրդը՝ ատենապետությամբ Հակոբյանի և Դարբինյանի, 1917 թ. նոյեմբերի 29-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղեց մի հեռագիր, ուր մասնավորապես ասված էր. «Նկատի ունենալով, որ հողային հարցի լուծումը Անդրկովկասում պիտի շոշափի մաս հայ վանական և եկեղեցական կալվածքների խնդիրը, խնդրում ենք Ձերդ վեհափառությունից, իբրև համազգային ներկայացուցիչ, դիմել Անդրկովկասյան կոմիսարիատին և բացատրել, թե այդ կալվածքները ամբողջ հայության սեփականությունն են կազմում և, եթե գրավվեն առանց հայկական ընդհանուր ազգային ժողովի հավանությանը, պիտի արթնացնեն Ամերիկայի, Եվրոպայի, Եգիպտոսի, Պարսկաստանի և մանավանդ Հայաստանի հայության արդար զայրույթն ու բողոքը: Անհրաժեշտ է ուրեմն, որ մեր ազգային հողերի գրավման խնդրի լուծումը հետաձգվի մինչև պատերազմի վախճանը, երբ հայ ժողովուրդը հնարավորություն կունենա գումարելու իր ընդհանուր ազգային ժողովը»¹⁹: Թիֆլիսում Անդրկովկասյան հողային կոմիտեի դեմ կազմվեց մի բողոքագիր, որի հեղինակն էր երդվյալ հավատարմատար Սենեքերիմ Արծրունին²⁰:

Երևանի Նահանգային հողային կոմիտեն 1917 թ. դեկտեմբերի 7-ի իր միստում հասկանալով, որ Հայ Եկեղեցու վանքապատկան հողերի առգրավումն իր հետ կբերի հայերի արդարացի զայրույթը և բողոքը, որոնք կարող են մինչև արյունալի բախումների հասնող ցնցումներ առաջ բերել, միաձայն որոշեց վանքապատկան հողերը չառգրավել և այդ հարցի վերջնական լուծումը թողնել Սահմանադիր ժողովին²¹:

Վանքապատկան հողերի առգրավման դեմ ելույթ ունեցան մաս Նոր Նախիջևանի հայերը:

Չմայած հայերի բողոքներին՝ Անդրկովկասյան կոմիսարիատը 1917 թ. դեկտեմբերի 16-ին օրենք հռչակեց պետական մասկին կալվածատիրական, եկեղեցական, վանքա-

¹⁸ Մատենադարան, արխիվ, թղթ. 84, գ. վավ. 15, թ. 5:

¹⁹ ՀՀՊՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2169, թ. 1:

²⁰ Մատենադարան, Տիրայր վարդապետի արխիվ, թղթ. 134, վավ. 114:

²¹ ՀՀՊՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2166, թ. 3:

պատկան, իրավաբանական անձանց և մասնատիրական հողերի առգրավման²², այդ թվում նաև Հայ Եկեղեցու կալվածքները, որպես կալվածատիրական հողեր, գրավման ենթարկելու մասին:

1917 թ. դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական ժողովը՝ ատենապետությամբ կաթողիկոսական տեղակալ Հուսիկ արքեպիսկոպոս Մովսիսյանի: Ժողովն ընդունեց հետևյալ բանաձևը. «Լսելով Կովկասի կոմիսարիատի կողմից պատրաստվող կալվածատիրական, վաճառական և եկեղեցական հողերի համայնացման վերաբերյալ օրենքի մասին՝ ժողովը եկավ այն եզրակացության, որ այդ օրենքի ընդունումը ծանր հարված է Հայ Եկեղեցու համար, և դա առաջ կբերի «խախտումն Հայ Եկեղեցու տեղական և միջազգային իրավունքների և կարող է առիթ տալ այնպիսի անհամաձայն շփոթումների և խռովությունների, որոնց ակամատես եղավ Կովկասի ազգաբնակչությունը 1903 թ.»:

Ժողովը որոշեց նաև դիմել Վեհափառ Հայրապետին, որպեսզի «նա Թիֆլիսում կազմված Ազգային խորհրդին, իբրև ռուսահայ ժողովրդի կողմից ընտրված լիազոր մարմնի, առաջարկի, որ վերջինս և այս ամսվա ընթացքում գումարվելիք Ազգային ժողովը անհրաժեշտ միջամտություններ անեն Կովկասի կոմիսարիատի մոտ և արգելեն ծրագրված օրենքի հրատարակումը»²³:

Տեսնելով, որ ՕԶԱԿՈՄ-ը այնուամենայնիվ ուզում է հողերի համայնացում կատարել, կաթողիկոսը դիմեց արտակարգ միջոցների: 1918 թ. հունվարի 10-ին նա հռչակեց թ. 1116 կոնդակը, ուր զարմանքով նշում էր, որ նույնիսկ 1836 թվականի Հայ Եկեղեցու միապետական օրենսդրության (Պոլոժենիայի) 1116 հոդվածում ասված էր, որ «Լուսավորչական հայ եկեղեցիներն իրավունք ունեն անշարժ կալվածքների տիրապետության», իսկ 1141 հոդվածի երրորդ կետում նշված էր, որ «Լուսավորչական հայ եկեղեցիների գույքերի և կալվածքների կարգն ու եղանակը» վերապահվում է Ս. Էջմիածնի Սինոդին:

Կոնդակի վերջում Գևորգ Ե-ն գրում էր. «Այլ որպեսզի ամբողջ աշխարհին ևս հայտնի լինի, թե այդ իրավունքների խլումը իմ ամբողջ ժողովրդի իրավունքների կապտումն է, Ձեզ ևս հորդոր ենք կարդում բարձրացնել Ձեր բողոքի ձայնը և ուղղել այնտեղ և նոցա, ուր և ում պետք է պաշտպան կանգնել ամենքիդ սեփականություն կազմող անկապտելի իրավունքների և ստացվածքի, որ 1903 և 1904 թվականների ծանր շրջաններում անգամ իմ ժողովուրդը հալածանքի, տառապանքի ու վշտերի ծանրություններն իսկ աչքի առաջ ունենալով, ոտքի ելավ իբրև մի հզոր, ամբողջական մարմին, իբրև մի կոտ զանգված և յուր որդիների արյան գնով իսկ ետ կարգեց յուր սեփականություն կազմող կալվածքներն ու ստացվածքները: Եվ եթե հալածանքների ու բռնությունների օրերին հայ ժողովուրդը չդանդաղեց ծառանալու բռնության դեմ յուր իրավունքների արդար պաշտպանության համար, մի՞թե այժմ, այս ազատության և ինքնորոշ կազմակերպության ազատագրության օրերին իմ ժողովրդի յուրաքանչյուր անհատը չպետք է ելնի և դեմ դնի այդ ոչ արդարացի որոշման և բարձրաձայն գոչի. «Ոչ ոք չհամարձակվի խլել մեր սեփականությունը, այն սեփականությունը, որ մեր պապերից ու նախնիներից ենք ժառանգել և որ մեր հետնորդ

²² Նույն տեղում, թ. 4-5:

²³ Նույն տեղում, թ. 4-5:

սերնդին պիտի հանձնվեր, և որի իրավունքների պաշտպանության համար պատրաստ ենք մեր կյանքն իսկ դնելու»²⁴:

1918 թ. փետրվարին Անդրկովկասյան Հատուկ կոմիսարիատը փոխարինվեց Անդրկովկասյան սեյմով: Անդրկովկասն ավելի անջատվեց Ռուսաստանից: Չնայած որ 1917 թ. դեկտեմբերի 16-ի ՕԶԱԿՈՄ-ի՝ Հայ Եկեղեցու կալվածքները, իբրև կալվածատիրական հողեր, գրավման ենթարկելու որոշումը չկիրառվեց, այնուամենայնիվ Անդրկովկասյան նոր իշխանությունները 1918 թ. մարտի 7-ին ընդունեցին նոր օրենք տիրոջը թողնված հողի չափահիշների որոշման և հողի ռեֆորմի իրագործման չափի մասին:

Հողի առգրավումը դրվում էր հատուկ լիազորվածների վրա, որոնց նույնիսկ թույլ էին տալիս կիրառել բռնություններ դիմադրողների նկատմամբ:

1918 թ. մայիսի 2-ին Անդրկովկասյան սեյմն ընդունեց Անդրկովկասյան կոմիսարիատի 1917 թ. դեկտեմբերի 16-ի օրենսդրության և իր՝ 1918 թ. մարտի 7-ի օրենքի մի լրացում, ուր մասնավորապես ասված էր, որ առգրավման ենթակա չեն այն հողերը, որոնք՝

1. Գտնվում են հողագործական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, մշակութային-լուսավորչական, բարեգործական-հիվանդանոցային և այլ կազմակերպությունների տրամադրության ներքո և ունեն հասարակական նշանակություն, եթե դրանք այդպիսիք ճանաչվեն հողագործության նախարարի կողմից:

2. Ազգաբնակչության օգտագործումից առգրավվում և ետ են վերադարձվում՝

ա) այն հողամասերը, որոնք ճանաչվում են բնության հուշարձաններ և արգելոցներ.

բ) ունեցած հողամասերը, պատմական և հնագիտական հուշարձաններով, քաղաքների ավերակները, պեղումների տեղեր, արվեստի գործերով և մշակույթի արժեքներով հարուստ կալվածքներ, հողամասեր՝ ամայացած տաճարներով, վանքերով, մզկիթներով, գերեզմաններով, դղյակներով, ամրոցներով և նման հուշարձաններով և այն հողաչափերով, որոնք անհրաժեշտ են, որպեսզի պահպանվի դրանց պատմական արժեքը²⁵:

Սեյմի այս լրացումից հետո Մայր Աթոռի դիվանը հանդես եկավ մի որոշումով, ուր ասվում էր. «Հայ Եկեղեցին ի հնուց անտի իր մեջ է կենտրոնացրել հայ ժողովրդի կրթական ամբողջ գործը:

Ա. Նա պահել է միևնույն վերջին տարիներս իր եկեղեցիների, մանավանդ իր վանքերի շուրջը դպրոցներ, որոնք եղել են հայկական կրթության և գրականության զարգացման հայտնի օջախներ:

Բ. Ամբողջ հին դպրությունը և գրականությունն առաջ է տարվել և ծաղկել բացառապես հոգևորականության և հատկապես վանականների ձեռքով:

Գ. Առաջին տպարանը Հայաստանում, ներկա դեպքում Էջմիածնում, հաստատվել է Հայ Կաթողիկոսի (Սիմեոն Երևանցու) ձեռքով: Այն գործում է ցարդ և կատարել ու կատարում է մշակութային մեծ գործ:

Դ. XIX դարում ազգային լավագույն դպրոցները եղել են եկեղեցական և վանական դպրոցները, որոնք հիմնվել են վանականների ձեռքով և եկեղեցու ու վանքերի եկամուտներով պահպանվել (Ներսիսյան, Շուշվա, Երևանի թեմական դպրոցները, Ախալցխայի,

²⁴ ՀՀՊԳԿԱ ֆ. 48, ց. 1, գ. 962, թ. 1-4:

²⁵ ՀՀՊԳԿԱ ֆ. 57, ց. 3, գ. 116, թ. 1-4:

Ալեքսանդրապոլի, Ագուլյաց Ս. Թովմա Առաքյալի վանքի, Երմջակի Ս. Կարապետ վանքի, Տաթևի, Հառիճի և մի շարք այլ վանքերի դպրոցները):

Ե. Առաջին ազգային բարձրագույն դպրոցը բացվել է Էջմիածնում և պահպանվել վանքի եկամուտներով: Այն կլանել է Ս. Էջմիածնի եկամուտների մոտ 60%-ը:

Զ. Հայ Եկեղեցին ընդհանրապես և, ի մասնավորի, վանքերն են եղել, որ պահել են հայ հին մշակույթի բեկորներն ու գրականությունը, որոնք ամփոփված են մրա ծոցում խմատքով պահպանված հազարավոր ձեռագրերի մեջ:

Է. Եթե Ռուսաստանում և Կովկասում մենք ունեինք ինքնավար դպրոցներ, դա պատմական հանգամանքներով Էջմիածնի Հայրապետության վրա դրված պարտքի և մրան վերապահված իրավունքի շնորհիվ էր միայն և այն մաքառման, որ մեր Հայրապետները վարում էին հին ռեծիմի դեմ:

Ը. Եթե օտարախոս հայի մեջ պահպանվում է ազգային ոգին և հետզհետե մոտեց գործում մայրենի լեզու, դա հայ հոգևորականի և Էջմիածնի պատմական դերի շնորհիվ է:

Թ. Ախալքալաքի, Ղարաբաղի, Զանգեզուրի, Լոռվա, Գանձակի ազգային վանական կալվածքները ոչ միայն մեծ մասամբ վանականների դրամներով և անձնական աշխատանքներով են ձեռք բերված, այլ մաս Էջմիածնի ջանքերով են վաստակված, հակառակ դեպքում դրանք կլինեին թուրք և մասամբ հայ բեկերի կալվածքներ: Այդ կալվածքների եկամուտներով պահպանվել են ժողովրդական դպրոցներ և մի բարձրագույն դպրոց Էջմիածնում:

Ձ. Ա. Հայ վանքերն իրենց շենքերով պահպանվել և շեն են պահվել բացառապես այն տեղերում, որտեղ Էջմիածինն ու մեր Հայրապետներն իրենց վարդապետներով հսկել և ավերածությունից ազատ են պահել: Օրինակ՝ Ս. Հոփսիսիմեի վանքը, որ հայկական ճարտարապետության գոհարն է, պահպանվել է շնորհիվ Էջմիածնի և այն տասնյակ հազարավոր գումարների, որ ծախսվել են մրա շինության վերանորոգության և բարեկարգ պահպանման համար:

Բ. Տաթև, Հառիճ, Հաղարծին, Չարեք, Խոր Վիրապ, Հաղբառ, Սանահին, Կեչառիս, Գանձասար, Ամարաս, Սևան, Երմջակի Ս. Կարապետ, Գեղարդ և մի շարք այլ մեծատաններ պահպանվել են շնորհիվ հատկապես վանականների և մեծաքանակ ծախսերի:

Գ. Էջմիածնի և մեր Հայրապետների շնորհիվ էր, որ Ամին տաճկաց տիրապետությունից ազատվելուց անմիջապես հետո վանահայր ունեցավ, որն իր ապրուստը հայթայթում էր Մայր Աթոռի միջոցներից: Ամինի հնագիտական հուշարձանների և պեղումներից հայտնաբերված հնությունների պահպանումը հնարավոր էր միմիայն շնորհիվ այնտեղ չարքաշ կյանք վարող վանահոր ներկայության և հոգացողության: Այս բոլորն ապացույց են այն մկիթման, որ հոգևոր բարձր իշխանությունը ցուցաբերում է դեպի ազգային հնությունները և պատմական թանկարժեք հիշատակարանները: Հայ Եկեղեցին, հավատարիմ ազգային ավանդական կարգերին, բոլոր այդ գործերը (դպրոցական, կալվածական) վարել է և վարում է ժողովրդական ոգով: Նա եկեղեցական բոլոր հիմնարկությունները կառավարել է ժողովրդի կողմից և ընտրված ներկայացուցիչների միջոցով: Հայ հոգևորականության այդ գործելակերպը բացատրվում է մրանով, որ մա իր պատմական ամբողջ կյանքի

ընթացքում չի կազմել մի կաստա՝ իր ուրույն շահերով, այլ մա միջոտ եղել է ժողովրդի մեջ և մրա համար:

3. Վանական և եկեղեցական հողերի գրավման խնդիրը կարգադրելիս նկատի պետք է ունենալ հետևյալ հանգամանքը.

- Ոչ միայն կալվածքները, այլ նաև վանքերի ու եկեղեցիների ամբողջ գույքը կազմում են ընդհանուր սեփականությունը Եկեղեցու և ազգի ամբողջության. այդ պատճառով էր, որ 1903 թ. ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ գրավման հայտնի ակտի: Ժամանակին Հայոց Հայրապետն ուժգնապես բողոքեց այդ բռնության դեմ և իր բողոքը հիմնավորեց օրենքով (X հ. I մ. 1213 հոդ.):

Բողոքի գորել ձայն բարձրացրին ոչ միայն այնտեղի, այլ նաև արտասահմանի հայերը և հայոց Պատրիարքները:

Նրանք չգիտեին, որ եթե Սեյմի օրենքի հիման վրա գրավեն այդ կալվածքները, դա ինչպե՞ս կազդեր արտասահմանյան հայության վրա և ի՞նչ հետևանքներ կունենար: Ոչ միայն Ռուսաստանը, այլ նաև մյուս պետություններն էջմիածինն ու Հայրապետությունը համարել են եկեղեցական-վանական կալվածքների տերն ու ժառանգը՝ ընդհանուր առմամբ վերցրած: Այսպես, Կալկաթայի և Բաթալիայի եկեղեցական համայնքների կանոնադրություններով, որոնք հաստատված են՝ առաջինը անգլիական թագուհու կողմից, իսկ երկրորդը՝ Ռուսական, եկեղեցական կալվածքների, դրամագլխի սեփականատեր և ժառանգ է ճանաչվում էջմիածինը:

4. Օտար պետությունները (Ռուսաստանը, Պարսկաստանը, Տաճկաստանը, նույնիսկ Անգլիան), անգամ իրենց սահմաններից դուրս, պաշտպանություն են ցույց տվել հայ հոգևորականությանը և երբեմն օգտագործել են նրան իրենց քաղաքական նպատակների համար: Դա բացատրվում է այն դիրքով, որ այդ հոգևորականները, ի դեմս իրենց Հայրապետների և Պատրիարքների, ձեռք էին բերել հանդեպ այդ պետությունների, որով շեշտվում է Հայրապետության միջազգային հանգամանքը: Մեր նորահաստատ պետության մեջ, նամանավանդ արտաքին հարաբերությունների մեջ, հայ բարձրաստիճան հոգևորականության և մանավանդ էջմիածնի դիրքն ու դերը ոչ միայն չի կարելի անտեսել, այլ նաև չպետք է անտեսել, քանի որ նա շատ խնդիրներում կարող է խիստ շոշափելի օժանդակություններ անել և ազդել մեր քաղաքական նպատակների բարեհաջող ընթացքի վրա: Այստեղ ցանկալի է, որ էջմիածինն իր մարմինների միջոցով, մեր ցուցմամբ, աջակցի, օրինակ, Վրաստանի, Ադրբեջանի, Պարսկաստանի և այլ երկրների մեր քաղաքական ներկայացուցիչներին ինչով որ կարող է, իսկ որ կարող է, դա դուրս է ամեն կասկածից:

Այսինքն՝ օտար պետության գործելակերպին հետևելով՝ մենք պիտի ձգտենք մեր քաղաքական նպատակների համար էջմիածինն ունենալ իբր օժանդակ և աջակից:

5. Ի նկատի պետք է ունենալ նաև այլ հանգամանքներ. այն է՝ եթե մենք, անտես առնելով Սեյմի օրենքների մատնամշած կետերը, որոնց հիման վրա կարող ենք և պետք է այդ կալվածքները գրավման զին (...անընթ.-Ա.Կ.) թողնենք, այլ դրա հակառակ՝ պետականացնենք էջմիածնի և այլ եկեղեցական-վանական հողերը, ապա մենք արտաքին հարաբերությունների մեջ կանգնած կլինենք դժվարության առաջ. այսինքն՝ մենք չպիտի կարողանանք օտար երկրներում գտնված մեր ազգային կալվածքների գրավման դեպքում

համդես գալ իբր ազգային շահերի պաշտպաններ: Մենք կարող ենք Եկեղեցու իրավունքները կապել, սակայն չենք կարող անտարբեր լինել դեպի այդ իրավունքներով մատնանշված օրենքները: Եթե Ղարաբաղն անդարձ կերպով անցնի Ադրբեջանին, մենք հո չենք կարող հրաժարվել այն իրավունքներից, որ ազգն ունի դեպի Գանձասարի, Խոթայի, Չաթիգայի, Ամարասի և այլ վանքերի կալվածքները: Պետք է գիտնալ, որ մոքա իրենց մեջ ամբարում են հանքային և անտառային հարյուրավոր միլիոնների հարստություն. այդ կալվածքների տարածությունն է շուրջ 100.000 հեկտարին: Ազգային այդ իրավունքների պաշտպանությունը հնարավոր է միայն Հայաստանի և Էջմիածնի միջոցով և շնորհիվ:

6. Էջմիածնի եկամուտները ծախսվում են հասարակօգուտ ձեռնարկների վրա, որի ցայտում օրինակն է Զանգվի առուն, որ կենդանություն պիտի տա հազարավոր հեկտարին անջրդի հողերի: Այդ գործի վրա վանքը 1913-1917 թվականներին դրել է հարյուր հազարներ՝ համարյա ամբողջ ծախսը իր վրա վերցնելով: Առվի խնդրում Էջմիածինը խտրություն չի դրել հայի և թուրքի միջև՝ մասնակցել տալով այդ բարիքին մաս թուրք Չորանգյարային: Նույնպիսի կոլտնտրական ձեռնարկ Էջմիածինն սկսել է մաս դարի սկզբին՝ Սև ջրից օգտվելու համար, և դրել է այդ փորձի վրա տասնյակ հազարներ:

Սրան պետք է ավելացնել մաս այն հանգամանքը, որ Արարատյան դաշտում այժմ ոչ թե հողի պակաս կա, այլ, ընդհակառակը, չկան բավականաչափ աշխատող ձեռքեր՝ եղած հողերը մշակելու»²⁶:

Դիվանի այս որոշումից հետո Անդրկովկասյան սելմը հրաժարվեց Էջմիածնապատկան հողերի գրավման ծրագրից:

²⁶ ՀՀՊՊԿԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2166, թ. 26-29: